

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԿԱՐԼԵՆ ԱՐՄԵՆԻ

**ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ
ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2020

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Հայկ Գերասիմի Մնացականյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Վարդան Բաբկենի Բոստանջյան

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Գևորգ Ֆերդինանտի Կիրակոսյան

Առաջատար կազմակերպություն՝

**ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտ**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2020թ. մայիսի 7-ին, ժամը 15:00-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0009, ք. Երևան, Աբովյան փ. 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2020թ. մարտի 23-ին:

**015 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
տեխնիկական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր**



Ա. Հ. Առաքելյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Արեւնախոսության թեմայի արդիականությունը: Համաշխարհային տնտեսության զարգացման ժամանակակից փուլում փոքր և միջին ձեռնարկությունները (այսուհետ նաև՝ ՓՄՁ-ներ) կարևորագույն դերակատարում ունեն երկրների ՀՆԱ-ի ձևավորման, տնտեսության տարբեր ճյուղերի մրցունակության բարձրացման, բնակչության զբաղվածության ապահովման և աղքատության կրճատման գործում: Միաժամանակ, փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը (այսուհետ նաև՝ ՓՄՁ ոլորտ) շատ երկրներում բախվում է տարբեր խնդիրների, որոնք խոչընդոտում են ՓՄՁ-ների զարգացմանը: Մի շարք ուսումնասիրություններ փաստում են, որ ՓՄՁ ոլորտի վրա բացասական առումով առավել մեծ ազդեցություն ունեն ֆինանսների հասանելիության խնդիրները: Այսպես, համաձայն Համաշխարհային բանկի վերջին տվյալների՝ ֆինանսական ռեսուրսների հասանելիության բարդությունները աշխարհի մասշտաբով ՓՄՁ-ների գործունեությունը սահմանափակող թիվ մեկ խոչընդոտն են:

Հարկ է նշել, որ ՀՀ ՓՄՁ ոլորտը անմասն չէ համաշխարհային միտումներից: Վերջին տասնամյակի ընթացքում մեր երկրում իրականացված տարբեր հետազոտությունները մշտապես արձանագրել են, որ ֆինանսների հասանելիության բարդություններն առկա են նաև ՀՀ-ում գործող ձեռնարկությունների շրջանում, իսկ համաձայն «Համաշխարհային մրցունակության զեկույց 2017-2018»-ի՝ ֆինանսական ռեսուրսների հասանելիության խնդիրները արդեն դարձել են ՀՀ-ում գործարարության վարման թիվ մեկ խոչընդոտը:

ՓՄՁ ոլորտի ֆինանսավորման առանձին հիմնահարցերը ուշադրության են արժանացել ինչպես արտասահմանյան, այնպես էլ հայազգի հետազոտողների կողմից, այնուամենայնիվ, մեր կարծիքով, ՀՀ տնտեսության զարգացման արդի ժամանակահատվածում ՓՄՁ-ների ֆինանսավորման հասանելիության խնդիրները և դրանց լուծման հնարավոր ուղղությունները ամբողջական և բազմակողմանի ուսումնասիրության չեն ենթարկվել:

Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է ՓՄՁ ոլորտի ֆինանսավորման հասանելիության խնդիրների առավել խորը և համապարփակ ուսումնասիրության կարևորությամբ, ինչպես նաև դրանց լուծման համալիր գործիքակազմի և առաջարկների մշակման անհրաժեշտությամբ:

Հեղազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության հիմնական նպատակը ՀՀ ՓՄՁ ոլորտի ֆինանսավորման հասանելիության բարելավման ուղղությունների մշակումն ու առաջարկումն է, որի իրագործման համար ատենախոսությունում առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել ժամանակակից տնտեսական կյանքում ՓՄՁ-ների դերն ու նշանակությունը,
- Հետազոտել ՓՄՁ ֆինանսավորման հասանելիության էությունն ու կարևորությունը,
- Դիտարկել արդի ժամանակահատվածում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման հիմնական խնդիրները,

- Ուսումնասիրել ՓՄՁ-ների ֆինանսավորման արտաքին աղբյուրների կառուցվածքը,
- Վերլուծել ՀՀ ՓՄՁ ոլորտի դինամիկան և կառուցվածքը,
- Քննարկել ՀՀ-ում ՓՄՁ-ների արտաքին, մասնավորապես՝ բանկային ֆինանսավորման առկա հնարավորությունները և պայմանները,
- Ուսումնասիրել ՀՀ ֆինանսական կազմակերպությունների և ՓՄՁ ոլորտին աջակցող կառույցների միջև համագործակցությունը և գնահատել վերջինիս արդյունավետությունը,
- Վերլուծել և գնահատել ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանն ուղղված պետական քաղաքականության արդյունավետությունը՝ ֆինանսական ռեսուրսների հասանելիության բարելավման համատեքստում:

Հեղազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ ՓՄՁ ոլորտն է: Հետազոտության առարկան ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրության արտաքին, մասնավորապես՝ բանկային ֆինանսավորման հասանելիության խնդիրների բացահայտումն է՝ ոլորտի բարելավմանն ուղղվածությունների մշակման նպատակով:

Հեղազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտության ընթացքում առաջադրված խնդիրների լուծման համար տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել հայազգի և արտասահմանյան հետազոտողների կողմից կատարված ուսումնասիրությունները և վերլուծությունները: Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել փոքր և միջին ձեռնարկատիրությունը կարգավորող ՀՀ օրենքները և ենթաօրենսդրական ակտերը, ինչպես նաև ՀՀ Կենտրոնական բանկի, ՀՀ Վիճակագրական կոմիտեի, ՀՀ էկոնոմիկայի նախարարության, Հայաստանի Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի, տարբեր միջազգային կառույցների հրապարակումները, պաշտոնական նյութերն ու վիճակագրությունը: Հետազոտության ընթացքում կիրառվել են համակարգային, տնտեսավիճակագրական, համեմատական և գործոնային վերլուծության մեթոդները:

Հեղազոտության հիմնական գիտական արդյունքները և նորոյթը: Առենախոսության գիտական նորոյթը պայմանավորված է հետազոտության շրջանակում իրականացված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա ստացված հետևյալ արդյունքներով.

- Հաշվի առնելով ՀՀ ֆինանսական շուկայի զարգացման արդի միտումները և ՓՄՁ ֆինանսական ռեսուրսների հասանելիության հիմնական խոչընդոտները՝ մշակվել է ՀՀ-ում ՓՄՁ-ների ֆինանսավորման հասանելիության բարելավման համալիր գործիքակազմ,
- Ոլորտի համալիր ուսումնասիրության արդյունքում մշակվել են ՀՀ-ում փոքր և միջին ձեռնարկությունների արտաքին, մասնավորապես բանկային ֆինանսավորման նորարարական գործիքների զարգացումը սահմանափակող արդի խնդիրների լուծմանն ուղղվածությունները,

- Պետական գնումներին մասնակցող ՓՄՁ-ներին բանկային երաշխիքների և ֆինանսավորման տրամադրման մեխանիզմների կատարելագործման նպատակով մշակվել և ՀՀ բանկային համակարգում ներդրվել է ֆինանսավորման նոր պրոդուկտ, որը նախատեսում է երաշխիքային և ֆինանսավորման սահմանաչափերի նախահաստատում՝ առանց անշարժ գույքի գրավադրման:

Հեթազոտության արդյունքների գործնական նշանակությունը:

Հետազոտության շրջանակում մշակված և ներկայացված առաջարկություններն ունեն գործնական էական նշանակություն և կարող են կիրառվել ՀՀ էկոնոմիկայի նախարարության, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի և այլ շահագրգիռ պետական մարմինների կողմից՝ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ռազմավարության մշակման և ֆինանսական ռեսուրսների հասանելիության բարելավման գործողությունների ծրագրման համատեքստում: Միաժամանակ, ատենախոսությունում բանկային ֆինանսավորման տարբեր պրոդուկտների, դրանց առավելությունների և զարգացման խոչընդոտների վերաբերյալ առաջարկությունները կարող են օգտակար լինել ՓՄՁ ոլորտի ներկայացուցիչների համար՝ նպաստելով ֆինանսական գրագիտության բարձրացմանը: Հետազոտության շրջանակում մշակված և ներդրված ֆինանսավորման պրոդուկտի՝ ՀՀ բանկային համակարգում հետագա տարածումը կարող է էապես նպաստել պետական գնումներին մասնակցող ՓՄՁ-ների ֆինանսավորման հասանելիության բարելավմանը:

Ատենախոսության շրջանակում արծարծված հարցերն ու եզրահանգումները նաև կարող են հիմք հանդիսանալ ոլորտի հիմնախնդիրներով զբաղվող այլ մասնագետների կողմից հետագա հետազոտությունների իրականացման համար:

Հեթազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Հետազոտության արդյունքները քննարկվել են ԵՊՀ Ֆինանսահաշվային ամբիոնի նիստերում, ինչպես նաև «Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր» միջազգային 5-րդ գիտաժողովում: Հետազոտության հիմնական դրույթների շուրջ իրականացվել են աշխատանքային քննարկումներ էկոնոմիկայի նախարարության ներկայացուցիչների և բանկային համակարգի համապատասխան մասնագետների հետ:

Հետազոտության հիմնական արդյունքներն ու բովանդակությունն արտացոլված են հրատարակված վեց գիտական հոդվածներում:

Արենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատանքը շարադրված է 128 էջի վրա՝ առանց հավելվածների:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության «**Ներածությունում**» հիմնավորվել է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան, աշխատանքի հիմնական գիտական

արդյունքները և նորույթը, ինչպես նաև դրանց տեսական և գործնական նշանակությունը:


Ատենախոսության առաջին՝ **«Փոքր և միջին ձեռնարկատիրության ֆինանսավորման տեսամեթոդական հիմքերը»** գլխում քննարկվել է ՓՄՁ-ների դերը ժամանակակից տնտեսական համակարգում, ֆինանսավորման արտաքին աղբյուրների կարևորությունը ՓՄՁ-ների աճի և զարգացման համատեքստում, ինչպես նաև ՓՄՁ-ների արտաքին ֆինանսավորման աղբյուրները:

ՓՄՁ-ները ողջ աշխարհի մասշտաբով հանդիսանում են ազգային տնտեսությունների հիմնական դերակատարներից մեկը: Համաձայն Համաշխարհային բանկի տվյալների՝ աշխարհի ձեռնարկությունների շուրջ 90%-ը միկրո, փոքր և միջին ձեռնարկություններ են, որոնք ապահովում են ընդհանուր զբաղվածության ավելի քան 50%-ը: Վերջին տասնամյակների ընթացքում զբաղվածությունը ՓՄՁ-ներում աշխարհի մասշտաբով կայուն կերպով աճել է: Այսպես, 2003-2016թթ. ընթացքում աշխարհի 132 երկրների հաշվարկով ՓՄՁ-ներում զբաղվածների թիվը գրեթե կրկնապատկվել է՝ 79 մլն-ից հասնելով 156 մլն մարդու: Զարգացող երկրներում ՓՄՁ-ները ձևավորում են ՀՆԱ-ի մինչև 40%-ը, ինչպես նաև ստեղծում յուրաքանչյուր 10 աշխատատեղից 7-ը:

Ձեռնարկատիրական գործունեությունը մշտական ֆինանսավորման կարիք ունի ձեռնարկության կյանքի բոլոր փուլերում: Ֆինանսական ռեսուրսների հասանելիության հիմնահարցերը, հատկապես վերջին տարիների ընթացքում, դարձել են ընդհանուր զարգացման օրակարգի անբաժանելի մասը և աշխարհի մասշտաբով ավելի մեծ ուշադրության են արժանանում տարբեր հետազոտողների, միջազգային կազմակերպությունների և կառավարությունների կողմից: Դա, ըստ էության, պայմանավորված է մի քանի հանգամանքով: Նախ, վերջին տարիներին առավել ակնհայտ է դարձել, որ ֆինանսները (ֆինանսական զարգացումը) նպաստում են ընդհանուր աճին թե՛ առանձին ձեռնարկության և թե՛ ընդհանուր տնտեսության մասշտաբով: Երկրորդ, ելնելով տնտեսություններում և արտադրությունում տեղի ունեցող փոփոխություններից, աճի հիմնական խոչընդոտների շարքում ֆինանսների հասանելիության խնդիրները առավել սրվել են: Երրորդ, վերջին տարիներին զգալիորեն աճում է գիտակցումն այն մտքի, որ ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը խնդրահարույց է շատ ձեռնարկությունների, հատկապես՝ ՓՄՁ-ների համար:

Վերոնշյալի իրավացիությունը հաստատում է Համաշխարհային բանկի կողմից իրականացված լայնամասշտաբ ուսումնասիրությունը, որը միավորել և ամփոփել է 2006-2019թթ.-ն ընկած ժամանակահատվածում աշխարհի շուրջ 140 երկրներում իրականացված տեղական հարցումներն ու հետազոտությունները՝ նպատակ ունենալով բացահայտել աշխարհի մասշտաբով ձեռնարկությունների գործունեության հիմնական խոչընդոտներն ու սահմանափակումները (տե՛ս Գծապատկեր 1):

Ինչպես երևում է Գծապատկեր 1-ից, ֆինանսական ռեսուրսների հասանելիության խնդիրները համաշխարհային տնտեսության մասշտաբով ձեռնարկությունների գործունեությունը սահմանափակող գլխավոր խոչընդոտն են, որի կշիռը 15 հիմնական խոչընդոտների շարքում կազմում է 15.6%:



Գծապատկեր 1. Զեռնարկությունների գործունեության հիմնական խոչընդոտներն՝ ըստ Համաշխարհային բանկի ¹

Ֆինանսների հասանելիությունը համարվում է ՓՄՁ-ների գործունեության կարևորագույն պայման՝ արտադրական հզորությունների ստեղծման, մրցակցության խթանման, աշխատատեղերի ստեղծման և աղքատության կրճատման համատեքստում: Առանց ֆինանսավորման, ՓՄՁ-ները չեն կարող ձեռք բերել և ներդնել նոր տեխնոլոգիաներ, գործնական հարաբերություններ հաստատել ավելի խոշոր ընկերությունների հետ, ինչպես նաև ընդլայնվել և ներկայանալ արտաքին շուկաներում:


Ֆինանսական ռեսուրսների հասանելիության խնդրի համատեքստում տնտեսագիտական գրականությունում լայն տարածում են ստացել երկու տերմիններ: Առաջինը «ֆինանսական միջոցների բաց» կամ «ձեռքվածք» (financing gap) տերմինն է, որն արտահայտում է ֆինանսական ռեսուրսների այն ծավալը, որի կարիքը ձեռնարկությունը ունի, սակայն չի ստանում: Այլ կերպ ասած՝ ֆինանսական միջոցների բացը ձեռնարկության ընթացիկ գործունեության և աճի համար պահանջվող ֆինանսական ռեսուրսների և փաստացի ստացվող ֆինանսական ռեսուրսների գումարների տարբերությունն է: Երկրորդը՝ «ֆինանսապես սահմանափակված ձեռնարկություններ» (financially constrained firms), որը վերաբերում է այն ձեռնարկություններին, որոնց համար դժվար հասանելի կամ անհասանելի են իրենց կարիքներին և պահանջներին համապատասխան ֆինանսական ռեսուրսները: Համաձայն ՄՖԿ-ի գնահատականների՝ ողջ աշխարհում ՓՄՁ-ների պահանջը ֆինանսական ռեսուրսների նկատմամբ կազմում է շուրջ 8.9 տրլն ԱՄՆ դոլար, ընդ որում՝ ՓՄՁ-ներին հասանելի է առկա պահանջի շուրջ 43%-ը՝

¹ Աղբյուրը՝ The World Bank's Enterprise Surveys, <https://www.enterprisesurveys.org/en/custom-query> (դիտման ամսաթիվը՝ 11.09.19թ.): Հաշվետվությունը կարելի է ստեղծել՝ հարցման դաշտում ընտրելով «բոլոր երկրներ» (all economies) և «ամենամեծ խոչընդոտ» (biggest obstacle) դաշտերը:

կամ 3.8 տրլն ԱՄՆ դոլար, իսկ մնացած 5.1 տրլն ԱՄՆ դոլարը կամ պահանջի 57%-ը կազմում է ֆինանսական միջոցների բացը:²

Ատենախոսության երկրորդ՝ «ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի առկա խնդիրները ֆինանսական ռեսուրսների հասանելիության համատեքստում, ինչպես նաև վերլուծվել են ՀՀ ՓՄՁ-ների արտաքին, մասնավորապես բանկային ֆինանսավորման հնարավորությունները:

2017թ.-ի վերջի դրությամբ ՀՀ-ում ըստ հարկ վճարողների սկզբունքի գրանցված և գործող ՓՄՁ սուբյեկտների քանակը կազմել է 79,747 հատ, ինչը ՀՀ-ում գործող բոլոր ձեռնարկությունների ընդհանուր թվաքանակի 99.3%-ն է (տե՛ս Գծապատկեր 2):



Գծապատկեր 2. ՓՄՁ սուբյեկտների թվաքանակի դինամիկան ՀՀ-ում ըստ ձեռնարկության չափերի, 2010-2017թթ.³


2010-2014թթ.-ին մեր երկրի ՀՆԱ-ի ձևավորմանը ՓՄՁ-ների մասնակցությունը ունեցել է նվազման միտում՝ 27.2%-ից հասնելով մինչև 24.4%, ապա 2015-2016թթ.-ին կտրուկ աճել է՝ հասնելով մինչև 36%, ապա կրկին կտրուկ նվազել՝ 2017թ.-ին կազմելով 28%: Կարծում ենք՝ այս ցուցանիշը բավականին ցածր է և վկայում է այն մասին, որ ՀՀ-ում առկա է ՓՄՁ ոլորտի հետագա զարգացման և տնտեսության մեջ դրա դերի մեծացման զգալի չիրացված ներուժ: Համեմատության համար նշենք, որ

² Աղբյուրը՝ <https://www.smefinanceforum.org/data-sites/msme-finance-gap> (դիտման ամսաթիվը՝ 17.10.19թ.)

³ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից, հիմք ընդունելով «Փոքր և միջին ձեռնարկատիրությունը բնութագրող հիմնական ցուցանիշները Հայաստանում 2010-2012թթ.», Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ, Երևան, 2013, և «ՓՄՁ ոլորտի զնահատման հետազոտություն Հայաստանում», Հայկական թիզեն կոալիցիա, Երևան, 2018 հրապարակումների տվյալները: 2013թ.-ի համապատասխան հրապարակված տվյալներ առկա չեն:

2017թ.-ի տվյալներով Եվրամիության անդամ երկրներում այդ ցուցանիշը միջինում կազմել է 56.8%, Վրաստանում՝ 59%:

Ինչ վերաբերում է ՀՀ ՓՄՁ-ներում զբաղվածների թվի դինամիկային, ապա 2010-2017թթ. ժամանակահատվածի տվյալներն ամփոփված են Գծապատկեր 3-ում:



Գծապատկեր 3. ՓՄՁ սուբյեկտներում զբաղվածների թվաքանակի դինամիկան ՀՀ-ում ըստ ձեռնարկության չափերի, 2010-2017թթ.⁴

Տվյալներից պարզ է դառնում, որ ի տարբերություն ՓՄՁ-ների բացարձակ թվաքանակի, որը դիտարկվող ժամանակահատվածում կայուն աճ է ցուցաբերել, ՓՄՁ-ներում զբաղվածությունը աճել է միայն 2010-2014թթ. ժամանակահատվածում, որից հետո սկսել է կայուն նվազել՝ 2017թ.-ի արդյունքներով գրեթե վերադառնալով 2010թ.-ի մակարդակին, ընդ որում՝ անկումը տեղի է ունեցել բոլոր չափերի ՓՄՁ-ների կտրվածքով: Արդյունքում, 2017թ.-ի դրությամբ ՓՄՁ-ներում զբաղվածների թիվը կազմել է 265,681 մարդ կամ ՀՀ ընդհանուր զբաղվածների 26.3%-ը: ՀՀ-ում ՓՄՁ ոլորտում զբաղվածների 67%-ը բնակվում են ք. Երևանում, իսկ 33%-ը՝ մարզերում:

Անդրադառնանք նաև ՀՀ ՓՄՁ ոլորտի բնութագրական գծերն արտացոլող ցուցանիշներին, մասնավորապես, ՓՄՁ սուբյեկտների կենտրոնացման մակարդակին ինչպես ըստ ՀՀ առանձին շրջանների, այնպես էլ ըստ տնտեսության ճյուղերի: Այսպես, 2017թ.-ի դրությամբ ՀՀ ՓՄՁ-ների գերակշիռ մասը կենտրոնացած է ք. Երևանում (ՓՄՁ-ների ընդհանուր թվաքանակի 53%), ապա Կոտայքի մարզում (8%), Արմավիրի մարզում (7%) և Լոռվա մարզում (6%): ՀՀ մարզերի շարքում 1000 բնակչի հաշվով ՓՄՁ-ների քանակով առաջատար դիրքում է ք. Երևանը, որտեղ այդ ցուցանիշը կազմում է 39, ապա Սյունիքի, Վայոց ձորի և Կոտայքի մարզերը՝ համապատասխանաբար 26, 26 և 25 ցուցանիշներով: ՀՀ ՓՄՁ-

⁴ Նույն տեղում

ների գերակշիռ մասը՝ 46,711 ձեռնարկություն կամ ընդհանուր ՓՄՁ-ների քանակի 59%-ը գործունեություն է ծավալում «մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում» ոլորտում:

Ինչպես արդեն նշել ենք, հատկապես զարգացող երկրներում ՓՄՁ-ները բախվում են տարաբնույթ խնդիրների, որոնց շարքում առավել սուր են ֆինանսների հասանելիության խնդիրները: Այս առումով մեր երկիրը ևս բացառություն չէ: Այդ խնդիրները մշտապես գտնվում են ՀՀ Կառավարության և տարբեր միջազգային կառույցների ուշադրության կենտրոնում, որոնք պարբերաբար իրականացնում են ուսումնասիրություններ՝ դրանց բացահայտման նպատակով:

Վերջին տարիներին ՀՀ-ում մի շարք հեղինակավոր միջազգային կազմակերպությունների կողմից իրականացված հետազոտությունների և ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ՓՄՁ-ների կողմից բանկային ֆինանսավորում ստանալու համար դիմելու սահմանափակող հիմնական գործոնները հետևյալն են՝


- Վարկավորման բարդ գործընթացներ,
- Բարձր տոկոսադրույքներ,
- Գրավադրման խիստ պահանջներ:

2016թ.-ին Եվրոպական բիզնես ասոցիացիայի կողմից հրապարակվել է «*Բիզնեսի համար հիմնական խոչընդոտները Հայաստանում*» հետազոտական ուսումնասիրությունը, որը ևս անդրադառնում է ՀՀ-ում միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների շրջանում առկա խնդիրներին: Հետազոտությունը ՓՄՁ ոլորտում արձանագրել է մի շարք խնդիրներ, որոնցից ոլորտի վրա առավել մեծ բացասական ազդեցություն են թողնում հետևյալները՝

- հարկային և մաքսային բարձր դրույքաչափեր,
- անբարենպաստ հարկային վարչարարություն և մաքսազերծման ընթացակարգեր,
- արդար մրցակցության բացակայություն,
- ֆինանսական ռեսուրսների ցածր հասանելիություն:

Վերոնշյալ հետազոտությունը մատնանշում է նաև ֆինանսների հասանելիության մասով առկա խնդիրների կոնկրետ ուղղությունները, այն է՝ առևտրի ֆինանսավորման և գրավով չապահովված վարկային պրոդուկտների բացակայություն (հարցվածների 68%-ը), վարկային միջոցների շատ բարձր տոկոսադրույքներ (67%), արտարժույթով աշխատելու բարձր ռիսկայնություն (54%), տեղական արժույթով վարկային միջոցների սակավություն (45%), նոր ստեղծվող կազմակերպությունների ֆինանսավորման պակասություն (44%), պետական սուբսիդիաների պակասություն (30%):

2018թ.-ին ՀՀ-ում ձեռնարկատիրության վարման խոչընդոտներին անդրադարձ է կատարել նաև Համաշխարհային տնտեսական համաժողովի (World Economic Forum) կողմից հրապարակվող «Համաշխարհային մրցունակության զեկույց 2017-2018»-ը (Գծապատկեր 4): Այսպես, ըստ Համաշխարհային մրցունակության զեկույց 2017-2018-ի՝ ՀՀ-ում գործարարության վարման թիվ մեկ խոչընդոտը ֆինանսական ռեսուրսների հասանելիության խնդիրներն են, որի կշիռը առանձնացված 15 խնդիրների շարքում կազմում է 13%:



Գծապատկեր 4. Գործարարության վարման հիմնական խոչընդոտները ՀՀ-ում⁵

Հարկ նշել, որ 2018թ.-ի վերջի դրությամբ ՀՀ ֆինանսական շուկայի խոչորագույն մասնակիցը բանկային համակարգն է, որին բաժին է ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների 85.5%-ը:

Բանկերի կողմից ՓՄՁ-ների վարկավորումն իրականացվում է ՀՀ դրամի դեպքում՝ սկսած 9% տարեկան տոկոսադրույքից, ԱՄՆ դոլարի դեպքում՝ սկսած 6.5%, իսկ եվրոյի դեպքում՝ սկսած 5.5% տարեկան տոկոսադրույքից: Նշված նվազագույն տոկոսադրույքներով վարկերը բանկերի կողմից առաջարկվում են հիմնականում կարճաժամկետ՝ մինչև 12 ամիս գործողության ժամկետով վարկավորում իրականացնելու պարագայում, սակայն կարճաժամկետ վարկերի պարագայում ավելի ցածր տոկոսադրույքի առաջարկը պայմանավորված է այն հանգամանքով, որ կարճաժամկետ վարկի դեպքում սահմանվում է նույն չափի միջնորդավճար, ինչ նաև երկարաժամկետ վարկի դեպքում, ինչը հանգեցնում է կարճաժամկետ վարկավորման փաստացի տոկոսադրույքի բարձրացմանը: Մեր հաշվարկներով, սակագների նման կառուցվածքի կիրառման արդյունքում կարճաժամկետ վարկերի փաստացի տոկոսադրույքը ՓՄՁ-ների համար բարձրանում է առնվազն 1-1.5 տոկոսային կետով:


Ատենախոսության երրորդ՝ **«ՓՄՁ ֆինանսավորման հասանելիության զարգացման ուղղությունները ՀՀ-ում»** գլխում վերլուծվել են ՀՀ ՓՄՁ ոլորտի պետական քաղաքականության միտումները, մշակվել է ՀՀ ՓՄՁ-ների ֆինանսական ռեսուրսների հասանելիության բարելավման արդի գործիքակազմ, ինչպես նաև մշակվել և առաջարկվել է ֆինանսավորման նորարարական բանկային պրոդուկտ:

Ընդհանրապես, տարբեր երկրների համապատասխան փորձի ուսումնասիրության արդյունքում հանգում ենք այն եզրակացությանը, որ դեռևս լուրջ

⁵ Schwab, K., Sala-i-Martin, X., "The Global Competitiveness Report 2017–2018", World Economic Forum, Geneva, 2017, p. 48

բանավեճերի առարկա է պետության մասնակցության և միջամտության չափը ՓՄՁ-ների ֆինանսավորման հասանելիության բարելավման գործում: Այսինքն, գոյություն չունի պետական կարգավորման, քաղաքականության և գործիքակազմի համընդհանուր բանաձև, որի կիրառությամբ հնարավոր կլինի ոլորտում հասնել երաշխավորված հաջողությունների. այն, ինչը կիրառելի է և աշխատում է մեկ երկրում, կարող է անօգուտ լինել և նույնիսկ հակառակ ազդեցությունը ունենալ մեկ այլ երկրում:

ՀՀ-ում ՓՄՁ-ների ֆինանսավորման հասանելիության առկա խնդիրների բացահայտման, ուսումնասիրության և վերլուծության արդյունքում մեր կողմից մշակվել է ոլորտի հիմնախնդիրների լուծման մի շարք գործողությունների և առաջարկների գործիքակազմ, որն ամփոփված է Գծապատկեր 5-ում:



Գծապատկեր 5. ՀՀ-ում ՓՄՁ-ների ֆինանսավորման հասանելիության բարելավման առաջարկվող գործիքակազմը ⁶

⁶ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից

Գրավային պահանջների մեղմացում:

ՀՀ-ում ՓՄՁ-ների ֆինանսավորման հասանելիությանը խոչընդոտող գործոններից էական դեր ունի ֆինանսավարկային կազմակերպությունների կողմից վարկավորման ժամանակ անշարժ գույքի գրավի պահանջը: Ներկայումս ընդունելի գրավ է հանդիսանում հիմնականում անշարժ գույքը, որի նկատմամբ կիրառվում է իրացվելիության գործակից՝ առավելագույնը գույքի շուկայական արժեքի 70-80%-ի չափով, ապա իրականացվում է վարկավորում գույքի իրացվելի արժեքի, որպես կանոն, մինչև 70%-ի չափով: Արդյունքում, ձեռնարկությունը ստանում է գույքի շուկայական արժեքի 50-60%-ի չափով վարկային միջոց: Խնդիրն առավել զգալի է դառնում մարզերում գործող ՓՄՁ-ների համար երկու հիմնական պատճառով: Նախ, մարզերում գտնվող անշարժ գույքն ունի ցածր արժեք, ուստի տվյալ գույքի գրավադրմամբ հնարավոր կլինի ստանալ համեմատաբար ավելի քիչ ֆինանսավորում, երկրորդ՝ բանկերի կողմից կիրառվում է իրացվելիության ավելի ցածր գործակից՝ առավելագույնը 60%: Որոշ դեպքերում բանկերը, առհասարակ, հրաժարվում են մարզերում գտնվող անշարժ գույքի ապահովությամբ ֆինանսավորում տրամադրել՝ համարելով տվյալ գույքը ոչ իրացվելի, սակայն զաղտնիք չէ, որ մարզերում գտնվող ՓՄՁ սուբյեկտներին նույնպես անհրաժեշտ են համադրելի չափով ֆինանսական ռեսուրսներ՝ գործունեության զարգացումն ապահովելու համար:

Բնականաբար, գրավի՝ որպես ֆինանսական կազմակերպությունների կողմից ռիսկերի կառավարման միջոցի դերը չի կարելի թերագնահատել: Այնուամենայնիվ, ՓՄՁ ֆինանսավորման հասանելիության բարելավման համար անհրաժեշտ է ռիսկերի կառավարելի շրջանակում աստիճանաբար կրճատել որպես գրավ անշարժ գույքի կիրառումը, որը, մեր կարծիքով, հնարավոր է երկու ուղղությամբ՝

- Նորարարական (ինովացիոն) առանց գույքային ապահովության բանկային ֆինանսավորման պրոդուկտների ներդրում և զարգացում,
- Անշարժ գույքին այլընտրանք հանդիսացող ապահովությունների կիրառության ընդլայնում:

Նորարարական բանկային պրոդուկտների համար որպես ապահովություն հանդիսանում են ոչ թե անշարժ կամ այլ շարժական գույքը, այլ, օրինակ, ձեռնարկության դեբիտորական պարտքերը, վարձատրության պահանջի իրավունքը, ապահովագրական վկայագիրը և այլն: ՀՀ բանկային համակարգի կողմից ներկայումս առաջարկվում են ֆակտորինգ, լիզինգ, գնման պատվերի ֆինանսավորում, Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալության (ՀԱԱԳ) ապահովագրության ապահովությամբ նախաարտահանման և հետարտահանման ֆինանսավորում և այլն, սակայն դրանք մեր երկրում դեռևս գտնվում են զարգացման սկզբնական փուլում և մեծ տարածում չունեն, ուստի նշված պրոդուկտների զարգացման խոչընդոտների վերացումը, միևնույն ժամանակ նոր՝ ՀՀ շուկայի ներկայիս պահանջներից բխող ֆինանսավորման գործիքների մշակումը առաջնահերթ խնդիրներ են:

Ելնելով ՀՀ ֆինանսական շուկայի առանձնահատկություններից՝ մեր կողմից մշակվել է նաև ՀՀ ֆինանսական շուկայի համար բոլորովին նոր, առանց անշարժ գույքի գրավի ֆինանսավորման պրոդուկտ՝ «Պեղական գնումների շրջանակում

երաշխիքային և ֆինանսավորման սահմանաչափի նախահաստատում», որը հաջողությամբ ներդրվել և իր կիրառությունն է ստացել «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ում: Պրոդուկտը նախատեսված է այն ՓՄՁ-ների համար, որոնք մասնակցում են պետական գնումներին և այդ գործընթացում կարիք ունեն բանկային համակարգից ստանալու երաշխիքային և ֆինանսավորման սահմանաչափեր: Պրոդուկտն իրենից ներկայացնում է պետական գնումների մասնակցության համար անհրաժեշտ երաշխիքային և հետագայում պարվերի կատարման ընթացքում անհրաժեշտ ֆինանսավորման գործիքակազմ, որի ներդրման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ Կառավարության կողմից 10.10.2019թ.-ին պետական գնումների գործընթացի կազմակերպման կարգում իրականացված փոփոխություններով: Պրոդուկտը ՓՄՁ-ներին հնարավորություն է տալիս պետական գնումների մասնակցության շրջանակում ստանալ առավելագույնը 125 մլն ՀՀ դրամի երաշխիքային/ֆինանսավորման սահմանաչափ, որը հնարավորության է ընձեռում մասնակցել հայտարարվելիք մինչև 115 մլն ՀՀ դրամ արժեք ունեցող մրցույթներին: Պրոդուկտի էությունը կայանում է նրանում, որ ընկերությունը նախապես դիմում է բանկին, և վերջինս համապատասխան ռիսկերի վերլուծության արդյունքում տվյալ ընկերության համար նախահաստատում է որոշակի սահմանաչափ, որն ընկերությանը ընձեռում է հնարավորություն հետագայում հրապարակվելիք և նախահաստատված սահմանաչափը չգերազանցող մրցույթներում ակտիվ մասնակցություն ցուցաբերել՝ հստակ իմանալով անհրաժեշտ ծավալի բանկային երաշխիքներ տրամադրելու բանկի պատրաստակամության մասին:

Նկարագրված պրոդուկտը զգալիորեն կլուծի մինչև 115 մլն ՀՀ դրամ պայմանագրային արժեք ունեցող մրցույթներին ՓՄՁ-ների մասնակցության խնդիրը, սակայն միայն բանկային երաշխիք ներկայացնելու մասով: Պայմանագրի կնքումից հետո կատարման ընթացքում մատակարար կողմի համար պետք է ապահովել նաև ֆինանսավորման հասանելիության որոշակի աղբյուրներ ևս: Քանի որ տվյալ պայմանագրի ապահովությամբ ֆինանսավորման առավելագույն սահմանաչափը արդեն իսկ օգտագործվել է բանկային երաշխիք ստանալու համար, ուստի լրացուցիչ ֆինանսավորում ստանալու համար անհրաժեշտ է ներդնել լրացուցիչ գործիքակազմ, որը մատակարար ՓՄՁ սուբյեկտին կապահովի լրացուցիչ ֆինանսավորում մինևույն ժամանակ հաշվի առնելով բանկերի կողմից ստանձնելիք ռիսկը: Նման իրավիճակում որպես լուծում կարող է լինել ապահովագրական ընկերությունների մասնակցությունը տվյալ գործընթացում: Առաջարկը հետևյալն է. ապահովագրական ընկերությունները, ուսումնասիրելով արդեն իսկ կնքված պայմանագիրը, ընկերությանն առաջարկեն ապահովագրական վկայագիր, որը կծածկի պայմանագրի պատշաճ կատարման պարագայում պատվիրատու/գնորդի չվճարման ռիսկը: Վերոնշյալ ապահովագրական վկայագրի ապահովությամբ բանկերը հնարավորություն կունենան ընկերությանը տրամադրել լրացուցիչ ֆինանսական միջոցներ՝ պայմանագրի պատշաճ կատարման համար:

Մշակված պրոդուկտի հիմնական ուղենիշային պայմանները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

«Պետական գնումների շրջանակում երաշխիքային և ֆինանսավորման սահմանաչափի նախահաստատում» պրոդուկտի տրամադրման հիմնական պայմանները⁷

N	Պայման	Պայմանագրով ստացվելիք դրամական հոսքերի ապահովությամբ
1	Ծառայության նպատակային օգտագործումը	Պետական գնումների շրջանակում «Հայտի ապահովման», «Որակավորման ապահովման», «Պայմանագրի ապահովման» և «Կանխավճարի ապահովման» բանկային երաշխիքների տրամադրում
2	Ժամկետը	մինչև 12 ամիս + 10 աշխատանքային օր
3	Երաշխիքի տրամադրման միանվագ միջնորդավճարը	Երաշխիքային սահմանաչափի նախատեսված համար 100,000 ՀՀ դրամ, իսկ սահմանաչափի շրջանակում բանկային երաշխիքների ստացման համար երաշխիքի գումարի 0.5%-ի չափով՝ նվազագույնը 25,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 250,000 ՀՀ դրամ
4	Տարեկան տոկոսադրույքը	«Հայտի ապահովման» համար՝ միանվագ 25,000 ՀՀ դրամ, Երաշխիքների մյուս տեսակների համար՝ 4%-6%
5	Տոկոսների վճարման կարգը	Միանվագ կամ ամսական
6	Արժույթը	ՀՀ դրամ
7	Ապահովության տեսակը	Պայմանագրով ստացվելիք դրամական հոսքեր

Անշարժ գույքին այլընտրանք հանդիսացող ապահովությունների կիրառության ընդլայնումը ՀՀ բանկային համակարգում գրավային պահանջների մեղմացման մյուս ուղղությունն է: Այլընտրանքային գրավի հիմնական տարբերակներն են՝ ընկերությանը պատկանող սարք/սարքավորումները, տրանսպորտային միջոցները և շրջանառության մեջ գտնվող ապրանքանյութական պաշարները (ԱՆՊ), ինչպես նաև ընկերության հաշիվների շարժերը: Ներկայումս ՓԼՁ սուբյեկտների ֆինանսավորում իրականացնելիս, բանկերը հիմնականում զուգակցում են անշարժ գույքը և այլընտրանքային գրավները, ընդ որում՝ վարկ/գրավ հարաբերակցությունը հաշվարկելիս այլընտրանքային գրավների համար բանկերի կողմից ներկայումս կիրառվում է ֆինանսավորման հնարավոր առավելագույն սահմանաչափի ցածր մակարդակ (գրավի արժեքի մինչև 50%): Նմանատիպ գրավները ունեն այն առանձնահատկությունը, որ դրանք գրավադրումից հետո մնում են տնտեսվարողի տիրապետման ներքո, ինչը հանգեցնում է գրավադրված գույքի անբարեխիղճ տնօրինման և/կամ կորստի/ոչնչացման ռիսկերի և միայն նշված ռիսկերի զսպման

⁷ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից

դեպքում այլընտրանքային գույքերը բանկերի համար ընդունելի կրառնան որպես ապահովություն: ՀՀ տեղական մի քանի բանկեր արդեն իսկ կիրառում են միայն այլընտրանքային գրավների հիման վրա վարկավորման սխեմաները, սակայն դրանց ծավալներն աննշան են: Մեր կարծիքով, դա պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ-ում ապահովագրության մշակույթը դեռևս զարգացման սկզբնական մակարդակի վրա է գտնվում և ապահովագրության ինստիտուտի նկատմամբ առկա են վերապահումներ ինչպես բանկերի, այնպես էլ տնտեսվարողների մոտ: Այսպես, ներկայումս ՀՀ-ում բավականին բարձր են ապահովագրական ծառայությունների սակագները, միաժամանակ, բավականին անբարենպաստ են ապահովագրական վկայագրերի պայմանները՝ կապված ապահովագրական պատահարների դեպքում հատուցման բացառությունների հետ (դա հատկապես կարևոր է բանկերի տեսանկյունից, քանի որ վարկավորման ժամանակ ապահովագրական պատահարի դեպքում վարկատու բանկը պետք է ստանա ապահովագրական հատուցման գումարները): Նմանատիպ խնդիրները հանգեցնում են այն բանին, որ տնտեսվարողները հաճախ հրաժարվում են իրականացնել գույքի ապահովագրություն՝ դիտելով այն որպես լրացուցիչ կամ ավելի ճիշտ է անվանել՝ «ավելորդ» ծախս, իսկ բանկերն էլ չեն շտապում այլընտրանքային գրավների ապահովությամբ վարկեր տրամադրել՝ ունենալով վերոնշյալ վերապահումները: Ուստի, պետք է փաստել, որ ապահովագրական շուկայի զարգացումը կրերի անշարժ գույքին այլընտրանքային գրավի կիրառության ծավալների ավելացմանը:

Տոկոսադրույքների նվազեցում

Ֆինանսական ռեսուրսների հասանելիության բարձրացման համատեքստում ձեռնարկությունների համար պակաս կարևոր չէ նաև ռեսուրսների գինը: Մեր աշխատանքում կատարված վերլուծությունների արդյունքները փաստում են այն մասին, որ բանկերի կողմից ՓՄՁ սուբյեկտներին առաջարկվող վարկային միջոցների սակագները զգալի բարձր են, հատկապես տեղական արժույթով վարկավորում առաջարկելու պարագայում:

ՓՄՁ-ներին առավել մատչելի տոկոսադրույքներով ֆինանսավորում իրականացնելու հնարավորության ստեղծման նպատակով առաջարկում ենք ՓՄՁ ոլորտի պետական աջակցության շրջանակում ստեղծել ՓՄՁ-ներին արտոնյալ պայմաններով, ՀՀ դրամով տրամադրվելիք ֆինանսավորման ֆոնդ, որը կառավարության կողմից ցածր տոկոսադրույքով կտրամադրվի բանկերին՝ վերջիններին կողմից տնտեսության գերակա ճյուղերում գործող կամ սկսնակ ՓՄՁ-ներին տեղաբաշխման նպատակով:

Ծրագրին մասնակից բանկերը կպարտավորվեն տեղաբաշխել տվյալ ֆոնդի ռեսուրսները որոշակի ֆիքսված առավելագույն տոկոսադրույքով և ժամկետներով, իսկ մասնակից բանկերը կընտրվեն մրցութային կարգով: Արդյունքում, բանկերը, և հետևաբար ՓՄՁ սուբյեկտները կունենան ավելի մատչելի ֆինանսական ռեսուրսներ, բանկերը պետության կողմից առաջարկվող ռեսուրսի ներգրավման համար ՓՄՁ-ներին կառաջարկեն մրցունակ պայմաններ, իսկ տվյալ ռեսուրսների տեղաբաշխման, վերլուծության և հետագա մոնիթորինգի իրականացումը և բխող ծախսերը կապահովվեն բանկերի կողմից: Մեր կողմից առաջարկվող ֆոնդը պետք է

ենթադրի նաև հստակ մարզային տարանջատում, մասնավորապես, մարզերում գտնվող ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսավորումը պետք է տրամադրվի առավել մատչելի պայմաններով, ինչը, վերջնական արդյունքում կհանգեցնի մայրաքաղաքի և մարզերի միջև տնտեսական զարգացման անհամաչափության կրճատմանը: Կարծում ենք, ֆոնդի շրջանակներում բանկերի կողմից ՓՄՁ-ներին տրվող վարկերի օպտիմալ պայմանները կարող են սահմանվել հետևյալ կերպ (տե՛ս Աղյուսակ 2):

Աղյուսակ 2.

Առաջարկվող պետական ֆոնդի շրջանակում բանկերի կողմից ֆինանսական միջոցների տեղաբաշխման առաջարկվող հիմնական պայմաններ ⁸

<i>Տոկոսադրույքը և արժույթը</i>	Մինչև 8.5%, << դրամ (մարզերում գործող ՓՄՁ-ների համար մինչև 7.5%)
<i>Վարկի տրամադրման նպատակը</i>	Հիմնական միջոցի ձեռքբերում կամ շրջանառու միջոցների համալրում
<i>Վարկի գումարը՝ հիմնական միջոցի ձեռքբերման նպատակով</i>	Առավելագույնը 200 մլն << դրամ
<i>Վարկի գումարը՝ շրջանառու միջոցի համալրման նպատակով</i>	Առավելագույնը 100 մլն << դրամ
<i>Վարկի ժամկետը՝ հիմնական միջոցի ձեռքբերման նպատակով</i>	Առավելագույնը 120 ամիս
<i>Վարկի ժամկետը՝ շրջանառու միջոցի ձեռքբերման նպատակով</i>	Առավելագույնը 36 ամիս

Ֆինանսավորման գործընթացների պարզեցում

ՓՄՁ սուբյեկտների ֆինանսավորման հասանելիության համատեքստում պակաս կարևոր չէ ֆինանսավորման գործընթացում ՓՄՁ սուբյեկտների և բանկերի միջև տեղեկատվության շրջանառման առկա ասիմետրիայի նվազեցումը: Խնդիրը կայանում է նրանում, որ ՓՄՁ-ների գործունեությունը խոշոր ձեռնարկությունների համեմատությամբ պակաս թափանցիկ է բանկերի համար՝ պայմանավորված այն հանգամանքով, որ դրանք չեն ենթարկվում արտաքին աուդիտի, հաճախ չեն ունենում հաստիքային հաշվապահ, ինչպես նաև չեն կիրառում ֆինանսական հաշվառման մասնագիտացված ծրագրեր: Արդյունքում, բանկերը վարկ տրամադրելու համար կամ սեփական մասնագետների միջոցով վերլուծում են ձեռնարկության ֆինանսական վիճակը, ինչը սակայն, շատ ժամանակատար և ծախսատար է կամ էլ կիրառում են գրավային խիստ պահանջներ: Առաջին դեպքում բարձրանում է վարկի տոկոսադրույքը, իսկ երկրորդ դեպքում նվազում է տրամադրվելիք վարկի գումարի մեծությունը. արդյունքում երկու դեպքն էլ հանգեցնում են ֆինանսավորման հասանելիության նվազմանը: Կարծում ենք, որ այս իրավիճակում պետությունը, ինչպես նաև ֆինանսավորող կառույցները պետք է

⁸ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից

որոշակի մեխանիզմներ կիրառեն՝ նպաստելով տեղեկատվության ասիմետրիայի նվազմանը:

Ներկայումս աշխարհի շատ երկրներում ՓՄՁ-ների վարկավորման գործընթացը իրականացվում է առցանց՝ տևելով առավելագույնը մի քանի ժամ: Նմանատիպ վարկավորում հնարավոր է իրականացնել տարբեր սքորինգային մոդելների կիրառության միջոցով: Ներկայումս ՀՀ-ում որոշ բանկեր ևս փորձ են կատարում ներդնել վարկավորման նմանատիպ սխեմաներ, սակայն գործընթացը դեռևս սաղմնային փուլում է: Ուստի, վարկավորման նման պարզեցված սխեմաների ներդրման գործընթացը արագացնելու համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է, որպեսզի Կենտրոնական բանկի կամ Բանկերի միության կողմից բանկային համակարգում ներդրվի սքորինգային մոդել, որը, հաշվի առնելով ձեռնարկության պաշտոնական հաշվետվությունները, վարկային պատմությունը, անկանխիկ շրջանառության ծավալները և այլ ցուցանիշներ, կսահմանի ձեռնարկության վարկավորման առավելագույն սահմանաչափ:

Սքորինգային մոդելով վարկավորման գործընթացում կարևոր նշանակություն է ստանում բանկերի հասանելիությունը վարկառու ձեռնարկության պաշտոնական հաշվետվություններին: Բանկերին ընկերությունների հարկային և մաքսային պաշտոնական հաշվետվությունների հասանելիության տրամադրումը զգալիորեն կհեշտացնի և կարագացնի տեղեկատվության հավաքագրման գործընթացը՝ հանգեցնելով նաև բանկերի համար ֆինանսավորման գործընթացում վարչական ծախսերի էական կրճատմանը: Միևնույն ժամանակ, հաշվետվություններին հասանելիությունը անհրաժեշտ պայման է մեր կողմից նկարագրված վերոնշյալ սքորինգային համակարգերի արդյունավետ աշխատանքի համար: Կարծում ենք, որ հաշվետվություններին հասանելիությունը ներկա փուլում պետք է տրամադրվի բանկերին՝ անկախ այն հանգամանքից, բանկը վարկավորումն իրականացնում է սքորինգային համակարգի կիրառմամբ, թե ոչ: Հատկանշական է, որ նկարագրված տարբերակով վարկավորման առավելագույն սահմանաչափերը կախված կլինեն ձեռնարկության պաշտոնական ֆինանսական ցուցանիշներից, ուստի ՓՄՁ-ներն իրենց հերթին շահագրգռված կլինեն հարկային հաշվետվություններում արտացոլել ձեռնարկության իրական ֆինանսական պատկերը, ինչը կհանգեցնի նաև սովորաբար տնտեսության ծավալների կրճատմանը:

Բանկերի և ՓՄՁ-ների միջև առկա տեղեկատվական ասիմետրիայի կրճատման արդյունավետ միջոց կարող է լինել նաև բանկերի համար ձեռնարկության ֆինանսական վիճակի ամենօրյա հասանելիությունը, ինչը կարծում ենք, կարող է իրականացվել հետևյալ սկզբունքով. բանկերի կողմից որպես լրացուցիչ ծառայություն կարող է իրականացվել միկրո և փոքր ձեռնարկությունների հաշվապահական հաշվառման վարումը, իսկ միջին ձեռնարկությունների հաշվապահության մասով բանկերը կարող են համագործակցել տարբեր հաշվապահական ծառայություններ մատուցող ընկերությունների հետ: Բանկերի կողմից ՓՄՁ-ների հաշվապահական հաշվառումը հեշտ իրականացնելի է, քանի որ բանկերն ունեն անհրաժեշտ բոլոր ենթակառուցվածքները տվյալ պրոդուկտի ներդրման, առցանց հարթակի ստեղծման և անհրաժեշտ ծրագրային ապահովման համար:

Ֆինանսական գրագիտության բարձրացում

Ֆինանսական գրագիտությունը բավականին սերտորեն կապված է ֆինանսական հասանելիության խնդիրների հետ, քանի որ հաճախ ձեռնարկությունները ֆինանսավորման անհրաժեշտության դեպքում դժվարանում են գնահատել, թե տվյալ պահին որ ֆինանսական ծառայությունն է առավել հարմար իրենց ֆինանսական խնդիրների լուծման համար, ինչը հանգեցնում է ստանդարտ վարկերի նկատմամբ մեծ պահանջարկի՝ նվազեցնելով այլընտրանքային ֆինանսավորման պրոդուկտների՝ լիզինգի, ֆակտորինգի, առևտրի ֆինանսավորման գործիքների նկատմամբ պահանջարկը: Մեր երկրում բավականին ցածր է տեղեկացվածության մակարդակը նշված այլընտրանքային պրոդուկտների առավելությունների և առանձնահատկությունների վերաբերյալ, միաժամանակ ձեռնարկությունները շատ ցածր են տեղեկացված երկրում գործող ՓՄՁ ոլորտի առկա աջակցության և զարգացման ծրագրերի մասին:

Որպես տեղեկացվածության մակարդակի և ֆինանսական գրագիտության բարձրացման արդյունավետ գործիք, մեր կողմից առաջարկվում է կիրառել աշխարհի մի շարք երկրներում հաջողությամբ գործարկված միասնական հարթակի գաղափարը, մասնավորապես, ՀՀ Էկոնոմիկայի նախարարության նախաձեռնությամբ և վերահսկողության ներքո ստեղծել մեկ միասնական հարթակ, որը առնվազն պետք է ապահովի հետևյալ ծառայությունների մատուցումը.

- Պետական ռեգիստրում իրավաբանական անձի գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի հավաքագրում և փաթեթի կազմում,
- Իրավաբանական անձի գրանցման աջակցություն,
- Գործող հարկային համակարգի, հարկման դրույքաչափերի և հարկային օրենսդրության վերաբերյալ տեղեկատվության տրամադրում,
- ՓՄՁ-ների ֆինանսավորման մասով գործող պետական աջակցության բոլոր ծրագրերի և դրանց պայմանների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում,
- Բանկերի կողմից առաջարկվող պրոդուկտների նկարագրություն և վարկավորման գործընթացում օժանդակություն,
- Հաշիվների բացման և վարման գործընթացում օժանդակություն,
- Պետական գնումների մասնակցության գործընթացի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն,
- Ծրագրի մասնակիցների համար կազմակերպվող ուսուցողական և տեղեկատվական սեմինարների կազմակերպում:

Տվյալ հարթակի ներդրումը ՀՀ Կառավարության համար կհանդիսանա ՓՄՁ սուբյեկտների ստեղծման և զարգացման արդյունավետ գործիք, կհանգեցնի ՓՄՁ գործունեության արդիականացմանը և թափանցիկ գործունեության ծավալման խթանմանը, և արդյունքում, երկրում կձևավորվի բիզնեսի համար նոր միջավայր, և գործարարությամբ զբաղվելու նոր հոգեբանություն և մշակույթ:

Ատենախոսության «**Եզրակացություններ**» բաժնում ամփոփվել են ատենախոսությունում կատարված ուսումնասիրությունների արդյունքները և դրանց հիման վրա մշակված առաջարկությունները.

• ՓՄՁ ոլորտը մշտապես բախվում է տարբեր խնդիրների, որոնք խոչընդոտում են ոլորտի բնականոն գործունեությանը և հետագա զարգացմանը: Այդ խնդիրներից են ֆինանսական ռեսուրսների հասանելիության բարդությունները, որոնք Համաշխարհային բանկի գնահատականներով վերջին տասնամյակում աշխարհում ՓՄՁ ոլորտի զարգացման գլխավոր խոչընդոտն են, և համաձայն վերջին ուսումնասիրությունների, այդ առումով բացառություն չէ նաև ՀՀ-ն:

• ՀՀ ֆինանսական շուկայի խոշորագույն մասնակիցը բանկային համակարգն է, ուստի ֆինանսական ծառայությունների առաջարկի առումով ՀՀ բանկային համակարգը գերիշխող դիրք ունի և հանդիսանում է ձեռնարկատիրության ֆինանսավորման գլխավոր աղբյուրը ինչպես փոքր և միջին, այնպես էլ խոշոր ձեռնարկությունների համար: Այդ իսկ պատճառով, ներկա փուլում ՀՀ-ում ՓՄՁ-ների ֆինանսավորման հասանելիության բարելավման հիմնական ուղղությունները և գործիքակազմերը, ըստ էության, հանգում են ՓՄՁ-ների համար բանկային ֆինանսավորման բարելավմանը և հասանելիության բարձրացմանը:

• ՀՀ-ում ՓՄՁ-ների շրջանում բանկային ֆինանսավորման կիրառության սահմանափակումները կապված են վարկային ռեսուրսների ինչպես պահանջարկով, այնպես էլ առաջարկով պայմանավորված խնդիրների հետ: Առաջարկով պայմանավորված հիմնական խնդիրներն են ՓՄՁ-ների ցածր վարկունակության, դրական վարկային պատմության բացակայության, բիզնես պլանների պատրաստման անընդունակության, ընդունելի գրավի բացակայության հետ կապված խնդիրները: Պահանջարկով պայմանավորված հիմնական խնդիրներն են՝ վարկավորման բարդ գործընթացները, բարձր տոկոսադրույքները և գրավադրման խիստ պահանջները:

• ՀՀ ՓՄՁ-ների՝ ֆինանսական ռեսուրսների հասանելիության խնդիրները հիմնականում հանգում են հետևյալին. առևտրի ֆինանսավորման և գրավով չապահովված վարկային պրոդուկտների բացակայություն, վարկային միջոցների բարձր տոկոսադրույքներ, արտարժույթով աշխատելու բարձր ռիսկայնություն, տեղական արժույթով վարկային միջոցների և նոր ստեղծվող կազմակերպությունների ֆինանսավորման սակավություն և պետական սուբսիդիաների պակասություն, ուստի ՓՄՁ զարգացման քաղաքականության հիմքում ընկած պետք է լինեն նշված խնդիրների վերացմանն ուղղված քայլերը:

• Ներկայումս ՀՀ-ում ՓՄՁ ոլորտի ֆինանսավորման վերաբերյալ հասանելի վիճակագրությունը լիարժեք չէ կամ բացակայում է, հատկապես ֆինանսավորման գործիքակազմի, ժամկետայնության, արժույթների, տոկոսադրույքների և այլնի մասով, ինչը հնարավորություն չի տալիս կատարել առավել առարկայական վերլուծություններ, համեմատություններ և բացահայտել առկա խնդիրները:

• Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը մեր երկրում հոչակվել է որպես կառավարության քաղաքականության գերակա ուղղություններից մեկը: ՓՄՁ ոլորտի պետական աջակցությունը իրականացվում է տարեկան ծրագրերով, որոնց մշակման պատասխանատու կառույցը Էկոնոմիկայի նախարարությունն է, իսկ իրականացնող հիմնական կառույցը՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը: ՓՄՁ ոլորտին իրենց աջակցությունն են ցուցաբերում նաև «Հայաստանի Զարգացման և Ներդրումների

Կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ-ն և «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ն:

- ՓՄՁ ԶԱԿ-ի և ՀՂՆԿ-ի հաշվետվությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել, որ այդ կառույցների ներուժն ամբողջությամբ չի իրացվում ՓՄՁ ոլորտի զարգացման համատեքստում: Միաժամանակ, 2010-2018թթ.-ին ՓՄՁ-ներին պետական աջակցության տարեկան ծրագրերի շրջանակներում ՀՀ պետական բյուջեից հատկացումները չեն փոխվել՝ մնալով 150-152.6 մլն ՀՀ դրամի մակարդակի վրա, և միայն 2019թ.-ին այդ գումարը ավելացել է 20%-ով՝ կազմելով 183.1 մլն ՀՀ դրամ, ինչը վկայում է ոլորտի պետական հոգածության ոչ բավարար մակարդակի մասին: Նշենք նաև, որ ՀՀ-ում մինչև այժմ առկա չէ ՓՄՁ ոլորտի պետական աջակցության երկարաժամկետ ռազմավարություն, ՓՄՁ-ների ֆինանսական հասանելիության բարելավման պետական ծրագրերը իրավիճակային բնույթ են կրում, ինչպես նաև ոլորտում բացակայում է համակարգված կորորդինացումը տարբեր պետական կառույցների և աջակցման ֆոնդերի միջև:

- Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ-ում ՓՄՁ-ների ֆինանսավորման հասանելիության էական բարելավման համար անհրաժեշտ է որոշակի գործողությունների իրականացմամբ հասնել հետևյալ նպատակների իրագործմանը. *գրավային պահանջների մեղմացում, Կրկուսադրույքների նվազեցում, ֆինանսավորման գործընթացների պարզեցում և ֆինանսական գրագիտության բարձրացում*: Այս նպատակները փոխկապակցված են և փոխլրացնող և կարող են շոշափելի արդյունքների հանգեցնել դրանց համատեղ իրականացման արդյունքում:

- Գրավային պահանջների մեղմացման համար մեր կողմից առաջարկվում է խթանել նորարարական (ինովացիոն) առանց անշարժ գույքի գրավի բանկային ֆինանսավորման պրոդուկտների՝ *ֆակտորինգի, լիզինգի, գնման պարվերի ֆինանսավորման, նախաարտահանման և հետարտահանման ֆինանսավորման* զարգացումը, ինչպես նաև անշարժ գույքին այլընտրանք հանդիսացող գրավների կիրառության ընդլայնումը: Միաժամանակ, մեր ուսումնասիրության շրջանակներում մշակվել է ՀՀ ֆինանսական շուկայում *նորարարական ֆինանսավորման պրոդուկտ*, որն ուղղված է ՓՄՁ-ների ֆինանսավորման հասանելիության բարելավմանը: Պրոդուկտը հաջողությամբ ներդրվել և իր կիրառությունն է ստացել և նախատեսված է այն ՓՄՁ-ների համար, որոնք մասնակցում են պետական գնումներին և այդ գործընթացում կարիք ունեն բանկային համակարգից ստանալու երաշխիքային և ֆինանսավորման սահմանաչափեր՝ առանց անշարժ գույքի գրավադրման:

- Տոկոսադրույքների նվազեցման նպատակով առաջարկվում է ստեղծել ՓՄՁ-ներին արտոնյալ պայմաններով, ՀՀ դրամով ֆինանսավորման ֆոնդ, որը կառավարության կողմից ցածր տոկոսադրույքով կտրամադրվի բանկերին՝ վերջիններիս կողմից տնտեսության գերակա ճյուղերում գործող կամ սկսնակ ՓՄՁ-ներին տեղաբաշխման նպատակով: Միաժամանակ, ՀՀ ֆինանսական շուկայում ՓՄՁ-ների համար առկա բարձր տոկոսադրույքների բացասական ազդեցությունը կարող են մեղմել սուբսիդավորման առավել արդյունավետ ծրագրերը, որոնք պետք է իրականացվեն ոչ միայն գյուղատնտեսական ծրագրերում, այլև առնվազն ընդգրկեն այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են արտահանման ներուժ ունեցող տնտեսության

ճյուղերը, վերամշակող արդյունաբերությունը, զբոսաշրջությունը, առողջապահությունը և այլն:

- Ֆինանսավորման գործընթացների պարզեցման նպատակով առաջարկվում է բանկային համակարգում ներդնել միասնական սքորինգային մոդել, որի արդյունավետ աշխատանքը կախված կլինի նաև բանկերին ձեռնարկությունների հարկային և մաքսային պաշտոնական հաշվետվությունների հասանելիության տրամադրումից: Միաժամանակ, ֆինանսավորման գործընթացների պարզեցմանը կարող է նպաստել բանկերի կողմից ձեռնարկությունների հաշվապահական հաշվառման վարման ծառայությունների իրականացումը:

- Ֆինանսական գրագիտության բարձրացման նպատակով մեր կողմից առաջարկվում է ստեղծել մեկ միասնական հարթակ, որտեղ գործարարները «մեկ պատուհանի» սկզբունքով կարող են ստանալ անհրաժեշտ բոլոր ծառայությունները բիզնեսը ստեղծելու և վարելու համար: Տվյալ հարթակում ներկայացված կլինեն ինչպես պետական շահագրգիռ կառույցները, այնպես էլ բանկերն ու այլ ֆինանսական կազմակերպությունները: Միաժամանակ, ընդհանուր ֆինանսական գրագիտության բարձրացմանը կարող է նպաստել ՀՀ ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից իրականացվող ուսուցման ծրագրերի արդյունավետության բարձրացումը՝ ի հաշիվ դասընթացների վարման առավել նորարարական մոտեցումների կիրառման:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Կ. Մարգարյան, «Վարկավորման նորարարական գործիքների կիրառումը ՀՀ-ում ՓՄՁ զարգացման գործում», «Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր», Միջազգային 5-րդ գիտաժողովի նյութեր, ԵՊՀ ԵԳՄ, Երևան, 2017թ., էջ 69-76
2. Կ. Մարգարյան, «ՓՄՁ-երի արտահանման ֆինանսավորման առկա հնարավորությունները ՀՀ-ում», «ԱՅԼԸՆՏՐԱՆՔ» Գիտական հանդես #3, հուլիս-սեպտեմբեր 2019թ., Երևան, էջ 287-297
3. Կ. Մարգարյան, «Ֆակտորինգը՝ որպես ՓՄՁ-ների ֆինանսավորման հասանելիության բարելավման գործիք», «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի», #3(55), Երևան, 2019թ., էջ 107-118
4. Կ. Մարգարյան, «Ֆինանսական ռեսուրսների հասանելիության բարելավումը՝ որպես ՀՀ-ում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման էական գործոն», «Գիտական Արցախ» պարբերական, №2(3), 2019թ., Երևան, էջ 250-260
5. Կ. Մարգարյան, «Ֆինանսական ռեսուրսների հասանելիության խնդիրները փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման համատեքստում», «ԱՅԼԸՆՏՐԱՆՔ» Գիտական հանդես #4, հոկտեմբեր-դեկտեմբեր 2019թ., Երևան, էջ 64-72
6. Կ. Մարգարյան, Հ. Մնացականյան, «ՓՄՁ-ների ֆինանսավորման հասանելիության բարելավման հիմնական ուղիները ՀՀ-ում», «ԱՅԼԸՆՏՐԱՆՔ» Գիտական հանդես #4, հոկտեմբեր-դեկտեմբեր 2019թ., Երևան, էջ 73-90

МАРГАРЯН КАРЛЕН АРМЕНОВИЧ
**ПРОБЛЕМЫ УЛУЧШЕНИЯ ДОСТУПНОСТИ ФИНАНСИРОВАНИЯ МАЛОГО И
СРЕДНЕГО ПРЕДПРИНИМАТЕЛЬСТВА В РА**

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.03 - «Финансы, бухгалтерский учет».

Защита диссертации состоится 07 мая 2020г. в 15:00 часов на заседании Специализированного совета по экономике 015 ВАК РА, действующего в Ереванском государственном университете по адресу: 0009, г. Ереван, ул. Х. Абовяна 52.

РЕЗЮМЕ

На современном этапе развития мировой экономики малые и средние предприятия (МСП) играют важную роль в повышении конкурентоспособности различных секторов экономики, обеспечении занятости населения, формировании среднего класса и сокращении бедности. Сектор МСП сталкивается со многими проблемами во многих странах мира, которые препятствуют нормальному функционированию и развитию МСП, а по последним данным Всемирного банка сложности доступа к финансовым ресурсам во всем мире являются барьером номер один для роста МСП. Сектор МСП Армении в этом плане не исключение: различные опросы, проведенные в нашей стране в течение последнего десятилетия, указывают на то, что доступ к финансам является проблемой для предприятий, действующих в Армении, и согласно Отчету о глобальной конкурентоспособности 2017–2018, доступ к финансовым ресурсам является препятствием номер один для ведения бизнеса в Армении.

Актуальность диссертации обусловлена важностью более глубокого и всестороннего изучения вышеупомянутых проблем, а также необходимостью разработки предложений и комплексного инструментария решения существующих проблем доступа к финансированию для МСП.

Основная цель исследования - разработать и предложить направления улучшения доступности финансирования МСП в Республике Армения, для реализации которого в диссертации были выдвинуты следующие задачи:

- изучить роль и значение малых и средних предприятий в современной экономической жизни;
- изучить важность доступа МСП к финансированию;
- рассмотреть ключевые проблемы, стоящие перед развитием МСП;
- изучить структуру внешних источников финансирования МСП;
- проанализировать динамику и структуру сектора МСП РА;
- обсудить возможности и условия внешнего, в частности банковского финансирования МСП в Армении,

- изучить сотрудничество между финансовыми институтами Армении и структурами поддержки МСП и оценить его эффективность;
- анализировать и оценивать эффективность государственной политики по развитию МСП в контексте улучшения доступа к финансовым ресурсам.

В рамках проведенного исследования получен ряд результатов теоретического, методического и практического характера, из которых научную новизну являются следующие:

- Учитывая текущие тенденции развития финансового рынка Армении и основные препятствия доступа к финансовым ресурсам, был разработан комплексный инструментарий для улучшения доступа к финансированию для МСП в РА;
- В результате комплексного исследования сектора были разработаны направления для решения текущих проблем, которые ограничивают развитие инновационных инструментов внешнего, в частности банковского финансирования для МСП в РА;
- Был разработан и в банковской системе Армении внедрен новый финансовый продукт, для улучшения механизмов предоставления банковских гарантий и финансирования для МСП, участвующих в государственных закупках, который предусматривает предварительное утверждение гарантийных и финансовых лимитов без залога недвижимости.

Рекомендации и подходы, разработанные и представленные в рамках исследования, имеют существенное практическое значение и могут быть применены Министерством экономики Армении, Национальным центром развития малого и среднего предпринимательства Армении и другими заинтересованными государственными органами РА в контексте разработки стратегии развития МСП и действий по улучшению доступа к финансовым ресурсам. Дальнейшее распространение в банковской системе Республики Армения продукта финансирования, разработанного и внедренного в рамках исследования, может значительно способствовать улучшению доступности финансирования для МСП, участвующих в государственных закупках.

Вопросы и выводы, поднятые в диссертации, также могут послужить основой для дальнейших исследований других специалистов в этой области.

KARLEN ARMEN MARGARYAN
**PROBLEMS OF IMPROVING ACCESS TO FINANCE FOR SMALL AND MEDIUM
ENTERPRISES IN RA**

The abstract of the dissertation for pursuing the degree of PHD in Economics in the field of 08.00.03 “Finance, Accounting”.

The defense of the dissertation will take place at 15:00 on May 07, 2020 at the Meeting of Specialized Council 015 in Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University.

Address: 52 Abovyan Street, Yerevan, 0009.

ABSTRACT

At the present stage of global economic development, small and medium enterprises (SMEs) play an important role in increasing the competitiveness of various sectors of the economy, promoting employment, the formation of the middle class and poverty reduction. The SME sector is facing many challenges in many countries around the world that impede the functioning and development of SMEs, and according to the latest World Bank data, access to finance is the number one barrier to SME growth worldwide. The SME sector of Armenia is not an exception: various surveys conducted in our country over the past decade indicate that access to finance is an issue for enterprises operating in Armenia, and according to the Global Competitiveness Report 2017–2018, access to finance has become the number one obstacle for doing business in Armenia.

The relevance of the dissertation is due to the importance of a deeper and more comprehensive study of the above-mentioned issues, as well as the need to develop solutions and comprehensive tools to the existing issues of access to finance for SMEs.

The main objective of the dissertation is to develop and propose ways of improving the access to finance for SMEs in the Republic of Armenia. For the implementation of the objectives, the following tasks were set in the dissertation:

- to study the role and importance of small and medium enterprises in modern economic life;
- to explore the importance of SME access to finance;
- to consider the key issues of SME development;
- to study the structure of external sources of financing for SMEs;
- to analyze the dynamics and structure of the SME sector of the Republic of Armenia;
- to discuss the possibilities and conditions of external, in particular, bank financing of SMEs in Armenia,
- to study the cooperation between Armenian financial institutions and SME support structures and evaluate its effectiveness;

- to analyze and evaluate the effectiveness of state policy on the development of SMEs in the context of improving access to finance.

Within the framework of the study, a number of theoretical, methodological and practical results were obtained, of which the following constitute the scientific novelty of the dissertation:

- Taking into account the current trends in the development of the Armenian financial market and the main obstacles for SMEs to access financial resources, a comprehensive toolkit has been developed to improve access to finance for SMEs in the Republic of Armenia;
- As a result of a comprehensive study of the sector, the main steps have been elaborated for solving current issues that limit the development of external financing instruments, in particular innovative bank financing for SMEs in the Republic of Armenia;
- A new financing product has been developed and introduced in the banking system of the Republic of Armenia to improve the mechanisms for providing bank guarantees and financing for SMEs participating in government procurement, which provides pre-approval of guarantee and financing limits without real estate collateral.

The recommendations and approaches developed and presented within the framework of the study are of significant practical importance and can be applied by the Ministry of Economy of the RA, the SME Development National Center of Armenia and other interested government agencies of the Republic of Armenia in the context of developing a strategy for the development of SME sector and actions to improve access to finance for SMEs. Further distribution of the financing product in the banking system of Armenia developed and implemented within the framework of the research can significantly improve the access to finance for SMEs involved in public procurement.

The questions and conclusions raised in the dissertation can also serve as the basis for further research by other specialists in this field.

A handwritten signature in black ink, appearing to be 'Y. Keif' or similar, written in a cursive style.